

կար են : Աւստի ասոնց տեղը հիմա
դիւրին բաղադրութիւն մը գտնուե-
ցաւ Կաղղիա, որ աս է .

Կաթի շաքար ¹	125 կմ ²	(2)	Կարի-բակա:
Գազի խէժ	3 . . .	7	65
Աղային թթուուտ ²	45		88
Անանուխի եղ	5 . . .	3	82
Բևեկնի եղ	6 . . .	"	65
Զտած ջուր, ճիւ-			
իրմ ու	244		75

Այսոնք բաղադրելու համար՝ նախ
կաթի շաքարն ու գազի խէժը 115-
միւրի ջերմաչափով ինչուան վաթ-
սուն աստիճան տաք ջրի մէջ դիր . ա-
ղային թթուուտն ալզատ՝ անանուխի
եղին ու բևեկնի եղին ծծել տուր, ու
զատ զատ 62 կրամմե 5 տասնակրամ
պաղ ջրի մէջ լուծէ . աս լուծուած
նիւթերը մէկտեղ բեր, 5 քիլոկրամ
ու 125 կրամ զտած ջրի հետ միա-
ցուր . ետքը խառնէ մէջը կիրի ած-
խուտ այնչափ որ ամէնը մէկէն թանձր
ըմպելիքի կամ շարապի՝ պէս բան մը
դառնայ . վերի ըսած հեղուկին 75
կրամին՝ 125 կրամ կիրի ածխուտ
պիտի դրուի : Այս խառնուրդը լեցուր
ապակիէ ամանի մէջ ու բերանը ձիւ-
թով աղէկ մը գոցէ . և երբոր կ'ու-
զես ժանգոտած մետաղ մը մաքրել,
աս նիւթէս քիչ մը անոր վրան լե-
ցուր . թէ որ հասարակ բան է ու
խիստ ժանգոտ է փայլեցնելիքդ՝ մէ-
ջը փոշի դարձած մնկաքար՝ խառնէ .
վերջը կտաւէ կամ բրդէ լաթ մը ա-
նոր մէջ թաթիս ու մետաղը շփէ
ինչուան որ ժանգն ելլէ ու բոլորովին
մաքրուի փայլի . ետքն ալ չոր լաթով
մը ցամքեցուր :

1 Գ.Ղ. Sucre de lait.

2 Իրեք կրամը մէկ տրամէն քիչ մը աւելի է . հա-
րիւրակրամը մէկ կրամին հարիւր մասին մէկն է .
իսկ քիլոկրամը գրեթէ 350 տրամէ :

3 Գ.Ղ. Gomme adragante. SՃ. + Ի.Ի. :

4 Գ.Ղ. Acide ossalique.

5 Կանէ Էտուլ :

7 Շաքար :

6 Թիւէմբնին :

8 Փո-մշա :

Դ յավախութեան դէմնար դէլ :

Դ յավախութեան դէմ պարզ և
զօրաւոր դեղ մը գտնուեր է Պարս-
կաստանի մէջ այսպիսի դիպուածով :
Լատղած շուն մը կը մտնէ ընկուզի
գործարան մը, և գործաւորներուն
մէկուն ոտքը կը խածնէ . մարդը կը
փախչի, ու վազելու ատենն աւազա-
նի մը մէջ կ'իյնայ, որ մէջը ընկուզէ
եղ լեցուցած են եղեր :

Ուրիշ գործաւոր մը կը վազէ որ
օգնէ իր ընկերոջը, և շունն ըս-
պաննէ . բայց անիկայ ալ կը խածնուի
ու կը մեռնի . իսկ առջի խածնուողը
և ոչ կը հիւանդանայ : Այս շունը
ուրիշ մարդիկներ ալ կը խածնէ, ա-
նոնք ընկուզի եղով կ'առողջանան .
իսկ անոնք որ ան դեղը չգործածե-
ցին՝ ամէնքն ալ մեռեր են :


ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՇԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա է ս թ ի ն ո թ ի է է կ ե ղ է շ ի ն :

Ա յ փառահեղ տաճարը | սնտրայի
գրեթէ առաջին երեելի շէնքն է ,
և բոլոր աշխարհիս ան հին ու պա-
տուական յիշատակներէն մէկն է որ
հարիւրաւոր տարիներ ահագին փո-
թորիկներու դէմ կենալով ինչուան
մեր օրերը հասեր են, և կը ցուցնեն
մեզի թէ քրիստոնէական սուրբ հա-
ւատքը ինչպէս պատճառ եղեր է
մարդկանց ճարտարութեանը և ար-
հեստներու առաջ երթալուն :

Ը ատ պատամիչներ կ'ըսեն թէ
Ա եսթմինսթրի եկեղեցին Ա պատ-
նիացւոց Ա երբերտոս թագաւորը սկը-
սաւ շինել եօթներորդ դարուն սկիզ-
բները : Ա րսէն աս շէնքին ճարտարա-
պետութիւն խիստ խառնակ կ'երևնայ.
բայց ամէն մէկ մասերը զատ զատ դի-



Ա Ե Ա Լ Ի Խ Ա Լ Ր Ի Ե Հ Ե Ղ Ե Շ Ի Ւ :

տել ուզողը երբոր կողմնական դիրքերը դիտէ՝ նայելէն չկրշտանար, մասնաւանդ արևմտեան կողմին սիւնազարդ գաւիթը : Ի՞ս եկեղեցւոյն ամէն դռներն ալ սքանչելի ձարտարապետութեամբ շինուած են, բայց ընդարձակութեան ու փառաւորութե կողմանէ արևմտեան դուռը ամենէն գերազանց է . աս դռնէն մտնելուդպէս բոլոր տաճարին ներսի դին կը տեսնուի : Եկեղեցւոյն ներսի պատերուն՝ սիւներուն ու ինչուան կամարներուն վրայ ալ ետքէն շինուած մէկմէկէ փառաւոր շիրիմներ ու անհամար զարդեր կան, որ թէպէտ զատ զատ առնելով շատ աղօւոր են, բայց բոլորը մէկտեղ խառնակ կ'երևնան : Եկեղեցւոյն ընդարձակ ատեանին երկու կողմը մէյմէկ թէ կայ երկընցած, և վրայի ծածքը երկու կարգ վրայէ վրայ շինուած կամարներով գոցած է . աս կամարները հինգ հինգ սիւներու վրայ շինուած են, և հինգ սիւներէն մէկը (որ մնացած չորսին մէժտեղն է) աւելի հաստ է : Դասին ձեւը կ'էս ութանկիւնի է, և առաջ ութը մատուռ ունէր, իսկ հիմա եօթը միայն մնացած է . վասն զի մէկը Ի՞նգղիացւոց Հենրիկոս Ը թագաւորին շիրիմը շինուած մատուռին գաւիթ եղած է : Դասը եկեղեցւոյն ատեանէն բաժնուած է երկըթէ զարդարուած դռով, և վերի ծայրը ձերմակ մարմարինէ աղուոր սեղան մը կայ որ Ի՞ննա թագուհւոյն ընծան է : Ի՞ս կտորին յատակը բոլոր զարդարուած է այնպիսի գեղեցիկ միւսիոնէ նկարներով՝ որուն նմանը չգտնուիր կ'ըսեն ձանցողները : Ի՞ս յատակը շինել տուաւ ՈՒիքարտոս Ո անըսուած Ո Եսթմինսթի աբբան թագաւորական ծախսքով . ասոր ամէն մէկ զարդերը ձեացած են յասպիս¹, ալաբաստր², պորֆիրեան կիճ³, գոճազմ⁴ և ուրիշ աս տեսակ պատուական քարերու կտորուանքով : Ի՞ս

դասին մէջ կը պսակուին ինչուան հիմա Ի՞նգղիացւոց թագաւորներն ու թագուհիները :

Եկեղեցւոյն քովի վանքը գրեթէ հրաշքով ամբողջ մնացած է ինչուան աս օրս, այնչափ պատերազմներու դէմ դնելով՝ որ ատեն մը խիստ յաճախ էին վանքերու դէմ : Ի՞ս վանքին պատերը այլեւայլ հին ցեղերու նշաններով ծածկած է . մեծ սրահը 1220⁵ շնած է, ու Հենրիկոս Զ թագաւորին ատենը հասարակաց ժողովատեղի եղաւ : Երեւելի է նաև Ո Եսթմինսթի դիւանը, որ Պատլիկմոն աշխարհակալը աւելի կարգաւորեց :

Պատիեր Քաղաքական վիճակի 1843 ամին :

ԵՒՐՈՊԱՅԻ քաղաքականութեան վիճակը 1843 տարւոյն մէջ ինչպէս ըլլալը տեղն 'ի տեղը գրելու համար խորունկ և ստոյգ տեղեկութին պէտք էր ունենալ՝ ոչ միայն եղած դիպուածներուն, հապա նաև անոնց ամէն պատճառներուն . աս առաջին պայմանը ինչպէս որ պէտք է կատարող գտնելը շատ դժուար ու նաև անկարելի կը համարինք : Ի՞նկէ զատ, հարկ էր կամք և դիտաւորութիւն ունենալ՝ Ճիշդ քաղաքական լրագրութեց պէս ո՞ր և իցէ լուրերը քաղելու և մեր ազգին հաղորդելու . աս պայմանն ալ (որ գովելի կերպով կը կատարեն միշտ ուրիշազգային լրագիրները) մեր դիտմունքէն դուրս է : Ո Ենք որովհետեւ խոստացեր Ենք յիշատակելերք եմն նաև Էր օրերուն հետաքրիական սիւլլ սորէլլու Դիպուածները, անոր համար ահա աս տարւոյս երկրորդ ամսուն սկիզբը կը դնենք համառօտ և ընդհանուր տեղեկութիւն մը թէ 1843 են մէջ Եւրոպայի ու Ի՞սիայի քաղաքականութիւը ինչ վիճակի մէջ էր : Ի՞նչպէս մեծամեծ ու երկար փոթորիկներէն ետքը սովորաբար մեծ խաղաղութիւն ու հանգարտութիւն

¹ Եշմ :

² Պալլամի :

³ Սամագ:

⁴ Լոճիվեր: